ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հուլիսի 2020 թվականի N 36

«ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵԻ» ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 42-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի շրջանակներում «Քաղաքացու բյուջեի» տրամադրման համար ներկայացված ծրագրին կամ ծրագրերին: /ծրագրերը կցվում են/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ
Բաբայան Վալերի
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Դավթյան Կարեն
Երիցյան Գագիկ
Խլղաթյան Արսեն
Պողոսյան Մնացական
Սահակյան Երեմ
Վարդանյան Նորայր
Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքիմարզի Չարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ.հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հուլիսի 2020 թվականի N 35

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

	Կողմ-11	դեմ-0	ձեռնպահ-0
Բաբայան Նարեկ		Խլղաթյան Արսեն	
Բաբայան Վալերի		Պողոսյան Մնացական	
Գասպարյան Անատոլի		Սահակյան Երեմ	
Գասպարյան Մելիք		Վարդանյան Նորայր	
Դավթյան Կարեն		Փանոսյան Արթուր	
Երիցյան Գագիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Հավելված
Չարենցավան համայնքի ավագանու
2020 թվականի հուլիսի
13-ի N 35 որոշման

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը),	Մակերեսը հա	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ բսահմանափակում-ների (ներառյալսերվիտուտների) առկայությունը	Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները, հողատեսքը*	Հողամասի տրամադրման եղանակները	մեկնարկային գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Չարենցավան համայնք գ.Ֆանտան հողամաս	100.0	Գյուղատնտեսական	Գյուղատնտեսական նպատակով	չկա	արոտավայր	վարձակալություն	Տարեկան 300000 դրամ
2.	Չարենցավան համայնք գ. Ֆանտան հողամաս	100.0	Գյուղատնտեսական	Գյուղատնտեսական նպատակով	չկա	արոտավայր	վարձակալություն	Տարեկան 300000դրամ
3.	Չարենցավան համայնք գ.. Արզական հողամաս 07-015-0186-0503	2.27	Գյուղատնտեսական	Գյուղատնտեսական նպատակով	չկա	արոտավայր	Աճուրդ	772000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀԿոտայքիմարզիՉարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ.հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հուլիսի 2020 թվականի N 34

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ07-067-0002-0054ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.06120985ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.01420163 ՀԱ-ԸՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-067-0002-0054 կադաստրային ծածկագրով 0.06120985 հա բնակավայրերի նշանակության հողամասից 0.01420163 հա-ը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-067-0002-0054 կադաստրային ծածկագրով 0.06120985 հա բնակավայրերի նշանակության հողամասից 0.01420163 հա-ը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասի հատակագիծը/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ	**Խլղաթյան Արսեն**
Բաբայան Վալերի	**Պողոսյան Մնացական**
Գասպարյան Անատոլի	**Սահակյան Երեմ**
Գասպարյան Մելիք	**Վարդանյան Նորայր**
Դավթյան Կարեն	**Փանոսյան Արթուր**
Երիցյան Գագիկ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

34

Հավելված
Չարենցավան համայնքի ավագանու
2020 թվականի հուլիսի 13-ի
N 34 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀԿոտայքիմարզիՉարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ.հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հուլիսի 2020 թվականի N 33

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ 07-015-0035-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.15961696 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-015-0035-0007 կադաստրային ծածկագրով 0.15961696 հա բնակավայրերի նշանակության հողամասը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-015-0035-0007 կադաստրային ծածկագրով 0.15961696 հա բնակավայրերի նշանակության հողամասը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասի հատակագիծը /:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ	**Խլղաթյան Արսեն**
Բաբայան Վալերի	**Պողոսյան Մնացական**
Գասպարյան Անատոլի	**Սահակյան Երեմ**
Գասպարյան Մելիք	**Վարդանյան Նորայր**
Դավթյան Կարեն	**Փանոսյան Արթուր**
Երիցյան Գագիկ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

33

Հավելված
Չարենցավան համայնքի ավագանու
2020 թվականի հուլիսի 13-ի
N 33 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«13» հուլիսի 2020 թվականի N 32

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ 07-015-0138-0035 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.13344696 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-015-0138-0035 կադաստրային ծածկագրով 0.13344696 հա բնակավայրերի նշանակության հողամասը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-015-0138-0035 կադաստրային ծածկագրով 0.13344696 հա բնակավայրերի նշանակության հողամասը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասի հատակագիծը/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ	**Խլղաթյան Արսեն**
Բաբայան Վալերի	**Պողոսյան Մնացական**
Գասպարյան Անատոլի	**Սահակյան Երեմ**
Գասպարյան Մելիք	**Վարդանյան Նորայր**
Դավթյան Կարեն	**Փանոսյան Արթուր**
Երիցյան Գագիկ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

32

Հավելված
Չարենցավան համայնքի ավագանու
2020 թվականի հուլիսի 13-ի
N 32 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հուլիսի 2020 թվականի N 31

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Չարենցավան համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշիռը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ	**Խլղաթյան Արսեն**
Բաբայան Վալերի	**Պողոսյան Մնացական**
Գասպարյան Անատոլի	**Սահակյան Երեմ**
Գասպարյան Մելիք	**Վարդանյան Նորայր**
Դավթյան Կարեն	**Փանոսյան Արթուր**
Երիցյան Գագիկ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«13» հուլիսի 2020 թվականի N 30

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ՀԱՏՎԱԾԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղ. 32 շենքի 18 բն. բնակիչ Ալիսա Տիգրանի Մարգարյանի 2020 թվականի մարտի 24-ի թիվ 949-16, Չարենցավան քաղաքի 7-րդ թաղ. 2 շենքի 38 բն. բնակիչ Լուսինե Յուրիկի Ալահվերդյանի 2020 թվականի հունիսի 30-ի թիվ 2451-16, Բջնի գյուղի 10-րդ փող.13 տան բնակիչ Նվեր Օնիկի Լաչինյանի 2020 թվականի հունվարի 31-ի թիվ 313-16 դիմումները, Չարենցավանի ԵԿՄ տ/բ նախագահ Ա. Բաղալյանի 2020 թվականի հունիսի 25-ի թիվ 2372-04 գրությունը և Չարենցավանի համայնքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի պետ Բ. Բալբաբյանի 2020 թվականի հունիսի 16-ի N 2223-04 զեկուցագիրը Չարենցավան քաղաքի 6-րդ թաղ. 17 շենքի 27 և 31 բնակարանների բնակիչներ Նունե Լադիկի Գրիգորյանին և Արմեն Օհանի Բաբայանին, ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Լուսինե Յուրիկի Ալահվերդյանին,***
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Նվեր Օնիկի Լաչինյանին,***
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Արմեն Օհանի Բաբայանին,***
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Նունե Լադիկի Գրիգորյանին,***

5. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 500.0 հազ. դրամ հատկացնել ***ԵԿՄ Չարենցավանի տարածքային բաժանմունքին,***
6. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Ալիսա Տիգրանի Մարգարյանին,***
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ	**Խլղաթյան Արսեն**
Բաբայան Վալերի	**Պողոսյան Մնացական**
Գասպարյան Անատոլի	**Սահակյան Երեմ**
Գասպարյան Մելիք	**Վարդանյան Նորայր**
Դավթյան Կարեն	**Փանոսյան Արթուր**
Երիցյան Գագիկ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«13» հուլիսի 2020 թվականի N 29-Ն

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հաստատված բյուջեի վարչական մասի՝

ա. 7422 «Վարչական գանձումներ»-ի «տեղական վճարներ» հոդվածի՝

աա. Համայնքային ենթակայության մանկապարտեզների «58000,0» թիվը փոխարինել «38500.0» թվով,

աբ. Համայնքային ենթակայության արտադպրոցական հիմնարկների «41545,65» թիվը փոխարինել «30361,650» թվով:

2) Հաստատված բյուջեի ֆոնդային մասի՝

ա.7332 «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» հոդվածի «28869.362» թիվը փոխարինել «33642.0» թվով,

բ. 8411 8411 «Հողի իրացումից մուտքեր» հոդվածի «46691,7» թիվը փոխարինել «90588.162» թվով,

3) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» - ի՝

աա. 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» սինթետիկ հաշվին հատկացնել 1300,0 հազ. դրամ,

աբ. 4216 «Գույքի և սարքավորումների վարձակալություն» սինթետիկ հաշվին հատկացնել 120,0 հազ. դրամ,

ագ. 4313 «Այլ հիմնական միջոցներ» սինթետիկ հաշվին հատկացնել 440.0 հազ. դրամ,

ադ. 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվի «3100,0» թիվը փոխարինել «600,0» թվով,

աե.4266 «Առողջապահական և լաբորատոր նյութեր» սինթետիկ հաշվին հատկացնել 234.0 հազ. դրամ,

ազ. 4267 «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» սինթետիկ հաշվին հատկացնել 940.0 հազ. դրամ,

բ. 0421 «Գյուղատնտեսություն» - ի՝

բա. 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվին հատկացնել 50.0.0 հազ. դրամ,

բբ. 4657 «Այլ կապիտալ դրամաշնորհներ» սինթետիկ հաշվի «2833,7» թիվը փոխարինել «4033.7» թվով,

գ. 06-1-1 «Բնակարանային շինարարություն»- ի 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին» սինթետիկ հաշվին հատկացնել 4300.0.0 հազ. դրամ,

դ. 06-6-1 «Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) »- ի 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվի «150,0» թիվը փոխարինել «1250,0» թվով,

ե. 09-1-1 «Նախադպրոցական կրթություն»- ի 4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «330850.0» թիվը փոխարինել «324482.0» թվով՝

եա. «Ա. Գրիգորյանի անվան Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ - ի 4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «79050.0» թիվը փոխարինել «75582.0» թվով՝

եբ. «Հրաշք» մանկապարտեզ ՀՈԱԿ - ի 4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «78100.0» թիվը փոխարինել «74700.0» թվով՝

եգ. «Բջնի գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ - ի 4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «27250.0» թիվը փոխարինել «27750.0» թվով՝

զ. 09-5-1 «Արտադպրոցական կրթություն»- ի 4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «252290.0» թիվը փոխարինել «244790.0» թվով՝

զա. «Գառզուի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ - ի 4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «85900.0» թիվը փոխարինել «81400.0» թվով՝

զբ. «Ա. Խաչատրյանի անվան ՄԵԴ» ՀՈԱԿ - ի 4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «83550.0» թիվը փոխարինել «80550.0» թվով՝

4)Համայնքի բյուջեի ծախսերի ֆոնդային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0421 «Գյուղատնտեսություն» - ի 5121 «Տրանսպորտային սարքավորումներ» սինթետիկ հաշվին հատկացնել 12500.0 հազ. դրամ,

բ. 0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվի «32125.062» թիվը փոխարինել «65767.062» թվով:

գ. 08-6-1 «Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)-ի 5111 «Շենքերի և շինությունների ձեռք բերում» սինթետիկ հաշվին հատկացնել 1000.0 հազ. դրամ,

դ. 09-8-1 «Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)-ի 5111 «Շենքերի և շինությունների ձեռք բերում» սինթետիկ հաշվի «6070,1» թիվը փոխարինել «7597.1» թվով,

5) ***Հաստատված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 սինթետիկ հաշվի «24000,0» թիվը փոխարինել «0» թվով:***

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ
Բաբայան Վալերի
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Դավթյան Կարեն
Երիցյան Գագիկ
Խլղաթյան Արսեն
Պողոսյան Մնացական
Սահակյան Երեմ
Վարդանյան Նորայր
Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հուլիսի 2020 թվականի N 28

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելու պահից:

Կողմ-10 **դեմ-0** **ձեռնպահ-1**

Խլղաթյան Արսեն
Բաբայան Վալերի
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Դավթյան Կարեն
Երիցյան Գագիկ
Սահակյան Երեմ
Պողոսյան Մնացական
Վարդանյան Նորայր
Փանոսյան Արթուր
Բաբայան Նարեկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Հավելված
Չարենցավան համայնքի ավագանու
2020 թվականի հուլիսի 13-ի
N 28 որոշման

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ

2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ/ԿԻՍԱՄՅԱԿԻ/ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

Չարենցավան համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի եկամուտների ճշտված պլանը 1180387.5 հազ. դրամ է, փաստացին կազմել է 538301.8 հազ. դրամ, կամ պլանը 2-րդ եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 45.6% ով:

Չարենցավան համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի ճշտված պլանով սեփական եկամուտ է պլանավորվել 454950.1 հազ. դրամ, փաստացի եկամուտը կազմել է 163952.9հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 36%-ով:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ***հարկեր և տուրքեր*** եկամտատեսակի գույքային հարկեր անշարժ գույքից հատվածի եկամուտների ճշտված պլանը կազմել է 247320.0 հազ. դրամ, իսկ փաստացին՝ 102299.7 հազ. դրամ, կամ 2-րդ եռամսյակի պլանը կատարվել է 41.3 % -ով:

Վարչական բյուջեի գույքային հարկեր անշարժ գույքից եկամուտների մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունի համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների գույքահարկը:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների գույքահարկի եկամուտների գծով պլանավորած 62050.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 33939.7 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 54.7%, իսկ գույքային հարկեր այլ գույքից՝ գույքահարկ փոխադրամիջոցների համար եկամտատեսակի գծով պլանավորած 119000.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 44624.8 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 37.5 % -ով:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի գծով պլանավորած 46000.0 հազ.դրամի դիմաց փաստացին կազմել է 12927.8 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 28.1 %-ով:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ՝ տեղական տուրքեր եկամտատեսակի գծով պլանավորած 14270.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 8765.6 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 61.4 % -ով:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր եկամտատեսակի գծով պլանավորած 6000.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 2041.6 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 34% -ով:

2020 թվականի վարչական բյուջեի ***պաշտոնական դրամաշնորհներ*** հատվածի ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից հատվածով պլանավորված 725437.4 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 374348.9 հազ դրամ, որից

ա. ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ հատվածով հատկացված 654591.5 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 327295.8 հազ. դրամ,

բ. ՀՀ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ հատվածով հատկացված 18662.1 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 8398.1 հազ. դրամ:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի ***այլ եկամուտներ*** եկամտատեսակի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով պլանավորված 21840.0 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի եկամուտը կազմել է 7402.8 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 33.9 %-ով:

2020 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքում համայնքի գույքի վարձակալությունից եկամուտներ՝ այլ գույքի վարձակալությունից վճարների գծով պլանավորված 3744.0 հազ. դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 1521.7 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 40.6 %-ով:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից՝ պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից պլանավորված 5474.3 հազ դրամի դիմաց ստացվել է 2463.4 հազ. դրամ:

2020 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքում վարչական գանձումներ եկամտատեսակով պլանավորած 175571.8 հազ. դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 49637.7 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 28.2%-ով:

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

2020 թվականի վարչական բյուջեի 2-րդ եռամսյակի ծախսային մասի պլանը կատարվել է 45.2 %-ով կամ տարեկան ճշտված պլանով նախատեսված 1182808.6 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 534549.9 հազ. դրամ:

2020 թվականի համայնքի բյուջեի 01-0-0 ***ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ*** հատվածի ծախսային մասի պլանը կատարվել է 45%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված 331050.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 149168.6 հազ. դրամ, որից ՝

ա. օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում հոդվածի պահպանման ծախսերը կատարվել է 43.1%-ով, կամ տարեկան ճշտված պլանով նախատեսված 249179.3 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 107591.7 հազ. դրամ,

բ. ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածի պահպանման ծախսերը կատարվել է 45.3%-ով, կամ պլանով նախատեսված 5920.7 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 2685.8 հազ.դրամ,

գ. ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ հոդվածի պահպանման ծախսերը կատարվել է 51.2%-ով կամ պլանով նախատեսված 75950.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 38891.0 հազ.դրամ:

2020 թվականի բյուջեի ծախսային մասի ***պաշտպանություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորվել է 800.0 հազ.

դրամ, որից՝

ա. քաղաքացիական պաշտպանություն հատվածով պլանավորվել է 600.0 հազ. դրամ,

բ. պաշտպանություն /այլ դասերին չպատկանող/ հատվածի ճշտված պլանով պլանավորվել է 200.0 հազ. դրամ:

2020 թվականի բյուջեի ծախսային մասի ***հասարակական կարգ, անվտանգություն եվ դատական գործունեություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորվել է 100.0 հազ. դրամ, որից՝

ա. փրկարար ծառայություն հատվածի ճշտված պլանով պլանավորվել է 100.0 հազ. դրամ:

2020 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***Տնտեսական հարաբերություններ*** հատվածի ճշտված պլանով նախատեսված 31843.7 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 18930.8 հազ դրամ, կամ պլանը կատարվել է 59.4%-ով, որից՝

ա.գյուղատնտեսություն հոդվածի վարչական ծախսերի ճշտված պլանով նախատեսվել է 2833.7 հազ դրամ, փաստացի ծախսը կազմել է 200.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 7%-ով:

բ.ճանապարհային տրանսպորտ հոդվածի ճշտված պլանով պլանավորված 29010.0հազ դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 18730.8 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 64.5%-ով:

2020 թվականի բյուջեի ծախսային մասի ***շրջակա միջավայրի պաշտպանություն*** հատվածի տարեկան ճշտված պլանով պլանավորված 163300.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 78998.4 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 48.3%-ով, որից՝

աղբահանում հոդվածի տարեկան ճշտված պլանով պլանավորված 163300.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 78998.4 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 48.3%-ով:

2020 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորվել է 940.0 հազ դրամ, որից

ա. փողոցների լուսավորում հոդվածի ճշտված պլանով պլանավորվել է 790.0 հազ դրամ:

բ. բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ/այլ դասերին չպատկանող/ հոդվածի ճշտված պլանով պլանավորվել է 150.0 հազ դրամ:

2020 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***հանգիստ, մշակույթ եվ կրոն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 33300.0 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 11437.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 34.3%-ով, որից՝

ա.մշակութային կազմակերպություններ հոդվածի ճշտված պլանով պլանավորված 31800.0 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 11437.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 36%-ով,

բ. գրադարաններ հոդվածի ճշտված պլանով պլանավորված 21800.0 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 10746.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 49.2%-ով,

գ. այլ մշակութային կազմակերպություններ հատվածի ճշտված պլանով պլանավորված 10000.0 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 691.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 6.9%-ով,

դ.քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ հատվածի տարեկան ճշտված պլանով պլանավորվել է 1500.0 հազ. դրամ, փաստացի ծախս չի կատարվել:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ***կրթություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 584474.9հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 266635.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 45.6 %-ով, որից՝

ա. նախադպրոցական կրթություն հոդվածի ճշտված պլանով պլանավորված 331784.9 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 138704.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 41.8 %-ով,

բ. արտադպոցական դաստիարակություն հոդվածի ճշտված պլանով պլանավորված 252290.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 127931.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 50.7 %-ով:

գ. կրթություն /այլ դասերին չպատկանող/ հոդվածի ճշտված պլանով պլանավորվել է 400.0 հազ. դրամ:

2020 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***սոցիալական պաշտպանություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 13000.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 9380.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 72.1%-ով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

Չարենցավան համայնքի 2020 թվականի 2-րդ եռամսյակի ֆոնդային բյուջեի ***հողի իրացումից մուտքերի*** եկամուտների ճշտված պլանը կատարվել է 50%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված 46691.7 հազ. դրամի դիմաց փաստացի մուտք է եղել 23369.7 հազ դրամ:

2020 թվականի 2-րդ եռամսյակի ֆոնդային բյուջեի ***պաշտոնական դրամաշնորհներ*** հատվածի պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/ եկամտատեսակի ճշտված պլանով նախատեսվել է 28869.3 հազ. դրամ:

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

2020 թվականի 2-րդ եռամսյակի ֆոնդային բյուջեի ***ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր*** հատվածի ծախսային մասի ճշտված պլանը կատարվել է 45.6%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմում է 81608.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 37219.3 հազ.դրամ, այդ թվում՝

շենքեր և շինություններ հոդվածի ճշտված պլանով նախատեսված ծախսը 45748.1 հազ. դրամ է, իսկ փաստացի ծախսը կազմել է 28869.3 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 63.1 %-ով, որից՝

շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածի ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 45748.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 28869.3 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 63.1%-ով,

2020 թվականի ֆոնդային բյուջեի 2-րդ եռամսյակի ***մեքենաներ և սարքավորումներ*** հատվածի ծախսային մասի ճշտված պլանը կատարվել է 25.4%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 32860.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 8350.0 հազ.դրամ,որից՝

ա. վարչական սարքավորումներ հոդվածի ճշտված պլանով ծախս է նախատեսվել 27860 հազ.դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 7360 հազ.դրամ, կամ պլանը կատարվել է 26.4%-ով,

բ. այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածի ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 5000.0 հազ.դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 960.0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 19.2 %-ով:

2020 թվականի բյուջեի ***այլ հիմնական միջոցներ*** հատվածի ծախսային մասի նախագծահետազոտական ծախսեր հոդվածի ճշտված պլանով նախատեսվել է 3000.0 հազ. դրամ:

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ

2020 թվականի բյուջեի ճշտված պլանով պահուստային ֆոնդը կազմում է 24000.0 հազ. դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«13» հուլիսի 2020 թվականի N 27

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:
5. Քաղաքացու անվամբ գրանցված 07-015-0138-0035 կադաստրային ծածկագրով 0.13344696 հա բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
6. Քաղաքացու անվամբ գրանցված 07-015-0035-0007 կադաստրային ծածկագրով 0.15961696 հա բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
7. Քաղաքացու անվամբ գրանցված 07-067-0002-0054 կադաստրային ծածկագրով 0.06120985 հա բնակավայրերի նշանակության հողամասից 0.01420163 հա-ը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

8. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
9. «Քաղաքացու բյուջեի» տրամադրման համաձայնություն տալու մասին:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ
Բաբայան Վալերի
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Դավթյան Կարեն
Երիցյան Գագիկ
Խլղաթյան Արսեն
Պողոսյան Մնացական
Սահակյան Երեմ
Վարդանյան Նորայր
Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ